# Գրադարանից օգտվելու կարգը

1. *Գրադարանից օգտվելու իրավունք ունեն ճեմարանի սովորողները, աշխատակիցները, ճեմարանականների միության անդամները, ծնողները, հարակից համայնքի բնակիչները:*
2. *Հազվագյուտ և արժեքավոր գրքերը, տեղեկատու հրատարակությունները, միջգրադարանային բաժնույթով ստացված գրքերը այցելուներին տրվում են միայն ընթերցասրահում աշխատելու համար:*
3. *Յուրաքանչյուր ընթերցող ստանում է անհատական ընթերցողական գրքույկ, որը համարվում է գիրքը ստանալու և վերադարձնելու փաստաթուղթ:*
4. *Գրքերի և այլ տպագիր նյութերի օգտագործման ժամկետը սահմանում է գրադարանավարը՝ ելնելով գրքի պահանջարկից, չգերազանցելով մեկամսյա ժամկետը:*
5. *Յուրաքանչյուր ընթերցող պատասխանատվություն է կրում վերցրած գրքերը, դասագրքերը պահպանելու և ժամանակին գրադարանին վերադարձնելու համար:*
6. *Ուսումը ճեմարանում ընդհատելիս, ավարտելիս կամ աշխատանքից հեռանալիս ընթերցողները պարտավոր են վերադարձնել գրադարանից վերցրած ամբողջ գրականությունը: Այդ մասին նշում է արվում ճեմարանի համապատասխան բաժնի կողմից տրված շրջիկ թերթիկի վրա:*
7. *Գրադարանի հավաքածուից տպագիր հրատարակություններ և այլ նյութեր կորցրած կամ անդառնալի վնաս պատճառած ընթերցողները պարտավոր են դրանք փոխարինել նույն գրքով կամ գրադարանի կողմից համարժեք ճանաչված համապատասխան գրականությամբ:*
8. *Համաձայն «Հրապարակային պայմանագրի», հանրակրթական դասագրքերը, նախօրոք ՀՀ ԿԳՄՍՆ կողմից սահմանված վարձավճարով տրամադրվում են Սովորողին, մեկ ուստարվա համար:*
9. *Ուսումնական գործընթացի անխափան ընթացքի համար գրադարանը համալրում է իր հավաքածուները անհրաժեշտ ուսումնական գրականությամբ:*
10. *Գրադարանը սահմանում է դասագրքերի ստացման և հանձման ժամանակացույցներ՝ առանձին-առանձին՝ ըստ դասարանային խմբերի:*

11. *Ընթերցասրահում տեղակայված են դասագրքային և համընդհանուր հավաքածուներից ընտրված գրքեր, հայերեն և օտար լեզուներով, այդ թվում.*
    - ✓ *Հանրակրթական և Միջազգային բակալավրիատի դասագրքեր*
    - ✓ *Տեղեկատու (հանրագիտարաններ, բառարաններ և այլն)*
    - ✓ *Ուսումնաօժանդակ՝ դասակարգված ըստ առարկաների*
    - ✓ *Մեթոդական*
    - ✓ *Մանկական*
    - ✓ *Տարբեր թեմաներով (պատմություն, աշխարհագրություն, արվեստ, մշակույթ, սպորտ, հոգեբանություն, փիլիսոփայություն, կրոն, տնտեսություն, իրավունք, լեզվաբանություն, գեղարվեստական գրականություն)*

- ✓ *Ճեմարանականների հեղինակած գրքերը և ստեղծագործությունները*
- ✓ *Ներճեմարանական գրքաշրջանառության անկյուն*
- ✓ *«Խորհուրդ է տալիս մեր ընթերցողը»*
- ✓ *Հնատիպ գրքերի նմուշներ*

12. *Համակարգիչները նախատեսված են տեղեկատվական բնույթի և կրթական նպատակներով աշխատանքների իրականացման համար, ուստի դրանք այլ նպատակներով օգտագործել չի թույլատրվում:*
13. *Ընթերցասրահում թույլատրվում է օգտվել հեռախոսից կամ էլեկտրոնային այլ սարքերից միայն կրթական նպատակներով:*
14. *Համակարգչից օգտվողը պատասխանատու է համակարգչի ֆիզիկական և ծրագրային պահպանության համար:*
15. *Արգելվում է գրքերի, գրադարանային ռեսուրսների ոչ նպատակային և անազնիվ օգտագործումը, այն է՝ գրադարանային միջավայրից դուրս գրքերի և գրադարանին հասանելի այլ ռեսուրսների պատճենումը, թվայնացումը կամ դրանց տարածումը թվային ձևաչափերով՝ առանց հեղինակի կամ գրադարանավարի գիտության ու թույլտվության:*
16. *Ընթերցասրահից օգտվողը պատասխանատու է գրադարանի գույքի պահպանության համար:*
17. *Ընթեցասրահ ուտելիք բերելն արգելվում է:*

*Ընթերցասրահում առկա գրականությունը դուրս չի տրվում:*

*Գրադարանի տարածքը տեսահսկվում է:*

*Գրադարանը աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը 9:00-ից մինչև 17:00:*